որ զամենայն ինչս իմ բովանդակի 'ի նմանէ նախ հատուցանեն ծախ թաղման իմոյ հասարակ Օրէն, երրորդ հարկ և մաքս հաս և բաժին տանն հայոց, չորրորդ հարկ պաշտման քահանայից, և ապա զամենայն պարտս իմ որում ցուցանէ դաֆտարն իմ հինգերորդ զուտ ստացուածքն իմ որպէս 'ի վայր։

Հատուցանեն բաժին հոգւոյ իմոյ մի քառասուն պատարագէց վասն թողութեան մեղաց իմոց, քսան դահեկան երծաթ առ Սուրբ Աթոռն Էջմիածին, տասն դահեկան երծաթ 'ի վանս Սուրբ Կարապետայ և տասն դահեկան երծաթ խոստովանահօրն իմոյ Տեառն կիրակոսի, և յիսուն դահեկան երծաթ տունն ողորմութեան հայոց։

'Ի զամենայն ստացուածքէ իմմէ քանի որ լինիցի զամենայն մի հարիւրի հինգ վարձս ընկալցեն կտակակատարքն իմ, և յաւելորդ նեղութիւնն իւրեանց զոր կրեն 'ի վերայ բանին իմոյ Տէր հատուցանէ նոցայ վարձս իւրեանց 'ի հանդերձելումն։

Զամենայն զոր ինչ հինգերորդք ստացուածք իմ 'ի յերեսս երկրի եթէ տուն, եթէ այգի, ագարակ, անտառ, խաշինք, անասունք, ոսկի, երծաթ, ակունք և զամենայն զոր ինչ և որքան որ բովանդակի համահաւասար տասն բաժին արասցեն և յանձնեսցեն երիս որդւոց և երկուս դստերաց և կնոջ իմոյ, այսմ մտածութեամբ զի